

ԴՊՐՈՑ

ԱՆՆԱ ԴՍԴԻԿՅԱՆ. «ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՄԵԿՏԵՂ, ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԵՎ ՎՐԱՑԵՐԵՆԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ»

Դիլիսկա գյուղը գտնվում է Ջավախքում, Փարվանա գետի ծախ ակիմ: Հարթավայրի վրա փռված գյուղը աչքի է ընկնում ինչպես իր տեղանքով, այնպես էլ՝ մեծությամբ: Գեղեցիկ Արուս սարը իր ծյունածերմակ գագաթով հեռվից, բայց հպարտ մայրում է այս գյուղին, որը սկզբում կոչվել է Դիլիսկարի: Այս խորհրդանշական եւ գեղեցիկ անունը, իրոք, հարազատ է հնչում եւ խորհել տալիս մեր պատմական անցյալի մասին: Ճիշտ է, այսօր գյուղը հայաբնակ է, սակայն պետական ծրագրերը, որոնք էթնիկական փոքրամասնությունների համար են իրականացվում, բավականին հաջողված են (անշուշտ, էթնիկական փոքրամասնությունը ի ուշագրավ ազգությամբ ոչ վրացի բնակչության, որպես պայմանական տերմին է օգտագործվում, թե Ջավախեթիում ո՞վ է փոքրամասնություն կազմում, մեր թերթի նախորդ համարում էլ նշեցինք, մասնավորապես՝ Ախալքալաքիում, բնակչության միայն 5,1 տոկոսն է վրացի (խմբ.):

Վրաստանի տարբեր շրջաններից Ջավախեթիում են աշխատում մի խումբ ուսուցիչներ, ովքեր վրացերեն են սովորեցնում տեղի հայկական դպրոցներում: Նրանց հետ միասին այդ դպրոցում վրացերեն են դասավանդում նաեւ տեղի բնիկ, ազգությամբ հայեր: Նրանցից մեկը Ախալքալաքիի շրջանի Դիլիսկա գյուղի թիվ 1 համրային դպրոցի (տնօրեն՝ Ռիմա Սկոյան) վրաց լեզվի ուսուցչուհի Աննա Պապիկյանն է: Նա արդեն 43 տարի է, ինչ անձնվիրաբար աշխատում եւ դաստիարակում է ապագա սերունդներին:

- Տիկին Աննա, պատմեք Ձեր մասին, որպեսզի ընթերցողը ավելի լավ ճանաչի Դիլիսկա գյուղի վրաց լեզվի ուսուցչուհուն,- ահա այսպես սկսեցինք մեր զրույցը նրա հետ:

- Ես ազգությամբ հայ եմ, մայրս վրացի էր: Իմ առանձնահատուկ սերը դեպի վրացերենը մորս՝ Մարիամ Իվանիշվիլու մեծ վաստակն է: Դժբախտաբար, 1987 թվականին մայրս ողբերգորեն մահացավ: Այդ օրվանից որոշեցի՝ ոչ մի դեպքում չմոռանալ մորս լեզուն, ինչ դժվարություններ էլ հանդիպեն ինձ: Մատաղ սերունդներին վրացերեն ուսուցանելը ես համարում եմ մորս ինչպես խնամք, օրինաբանություն: Ուստի, ես առ այսօր նրա հոգու խաղաղության եւ հիշատակը վառ պահելու համար իմ համագյուղացիներին մեծ խանդավառությամբ եմ սովորեցնում վրաց լեզուն: Ասեմ, որ հայրս՝ Սուրեն Պապիկյանը, ծնունդով Ախալքալաքիի շրջանի Բալխո գյուղից էր, աշխատում էր Ախալցխայում, այնտեղ էլ ամուսնացավ մորս հետ, որտեղ ծնվեցի ես: Հաճախում էի վրացական դպրոց: Ավարտեցի իմստիտուտը եւ 1973 թվականի սեպտեմբերին սկսեցի աշխատել Դիլիսկայի այս դպրոցում: 6 ամիս հետո, փետրվարին ամուսնացա Ռուլանդ Եզոյանի հետ, այսօր 4 երեխայի մայր եմ ու 10 թոռների տատիկ: Ասեմ նաեւ, որ ուսուցչությանս ընթացքում անընդհատ ունեի այն զգացողությունը, որ, երեխաների հետ շփվելիս, օրըստօրե փոխվում էի: Փորձում էի նրբորեն մոտենալ նրանց, զգալ նրանց հոգին, ներարկել սեր դեպի գիրը, ընթերցանությունը, ազատ մտածողությունը...

- Ի՞նչ է նշանակում լինել լավ ուսուցիչ:
- Երեխան կյանք է, սրբություն, նրա աչքերը միշտ խոսում են: Ուսուցիչ հետ մա միշտ աչքերով է կապ հաստատում: Անձամբ ես, երեխայի հետ շփվելիս, մի հայացքից եմ զգում նրա ապրումները, ցանկությունները, տեսնում, թե ինչպես են ընդունել բացատրած նոր նյութը, ինչ են հասկացել եւ էլի ինչ են պահանջում:

Կարծում եմ մանկավարժությունը գիտակցված պատասխանատվություն է: Հենց այս պատճառով, հասկանալով այս ամենը, դասերն էլ մեծ պատասխանատվությամբ եմ ծրագրում, քանի որ ծրագրած դասը ավելի հաջողված է եւ համապատասխանում է աշակերտի պահանջներին, իսկ նախատեսված արդյունքը՝ ավելի որոշակի, ուստի հենց սկզբից ձգ-

տում եմ կողմնորոշումս ուղղել դեպի վերջնական արդյունքի հաղթանակը:

Վրացերենի ուսուցումը շատ բարդ գործընթաց է: Իմ նպատակն է վրաց լեզվի ուսուցման հետ մեկտեղ սովորեցնել նաեւ վրացերենի դերն ու նշանակությունը մեր կյանքում, քանի որ երեխաները միայն դրանից հետո են վառ ըմբռնում, թե ինչու պիտի սովորեն այն եւ, լավ կրթություն ստանալու դեպքում, ինչ առավելություններ կարող են ունենալ:

Իմ դասերին փորձում եմ նաեւ երեխաներին բացատրել ու հասկացնել, թե ինչ է լեզուն, հաղորդակցությունը, որպեսզի խորը ներթափանցել լեզվի խնդիրներին մեջ եւ միայն սրանից հետո անցնում եմ դասը բացատրելուն: Զգում եմ, որ ավելի հետաքրքրությամբ են ինձ լսում: Բառապաշար հավաքելու համար կարելու է նաեւ վրաց բառաֆոնդի ուսումնասիրություն: Ուստի, շաբաթը մեկ ունենք Բառարանի օր, եւ այդ օրը ուսումնասիրում ենք միայն բառագիտություն:

Երջանիկ եմ, որ ունեմ հնարավորություն տեսնելու, թե ինչպես են կատարելագործվում վրացերենում իմ սաները:

- Ձեր կարծիքով, ուսուցման արդյունավետ արդյունքներ ստանալու համար ինչպիսի՞ մեթոդներ գոյություն ունեն:

- Ինչպես գիտեք, գոյություն ունեն ուսուցման բազմաթիվ մեթոդներ, սակայն, ըստ իս, արդյունավետ ուսուցման մեթոդ պետք է փնտրի ինքը՝ ուսուցիչը, բացահայտի, թե ինչ են պահանջում երեխաները, գիտելիքի ինչ մակարդակ ունեն, եւ ինչքանով է ունակ նրանց բանականությունը: Երեխաներին պետք է տրվի մտածելու, իրենց վրա աշխատելու ժամանակ:

Օրինակ բերեմ իմ դասավարձման ընթացքից, թե ինչն է եմ համարում արդյունավետ ու-

սուցում: Երբ աշակերտներին նոր նյութ եմ բացատրում, բազմաթիվ նոր բառեր եմ հանդիպում, որոնք պետք է բացատրեմ: Բացատրելու համար մեթոդներ եմ որեւէ պատմություն, դեպք, լուսանկար եւ այլն: Օգտագործում եմ տարբեր մեթոդներ, որպեսզի երեխաներին հասկացնեմ բառի ճիշտ նշանակությունը, այսինքն ոչ թե ես թարգմանեմ կամ բառարանի միջոցով նրանց թարգմանել տամ, այլ ենթատեքստից ելնելով՝ նրանք բացահայտեն նոր բառի իմաստը: Այս ընթացքում վարժվում է նրանց խոսքը, սովորում են մտածել եւ բառերն ավելի լավ են կապակցում:

Երեխաներն իրենք են ինձ օգնում ավելի լավ ծրագրել դասը եւ հասնել ցանկալի արդյունքի: Ամեն ինչի սկիզբը երեխան է եւ նրա շրջապատը, այսինքն մեզանից՝ մանկավարժներիցս է կախված, թե որքանով ենք բարենպաստ միջավայր ստեղծում ուսուցման համար, որքանով ենք փորձում ներգրավել նրանց դասի մեջ եւ որքանով ենք երեխային հնարավորություն տալիս, իր մտածածը կարելու եւ ընդունելի դարձնելու համար:

- Տիկին Աննա, վրացերեն դուք շատ լավ եք գրում, Ձեր փորձի պատմվածքները կարդալու հնարավորություն եմ ունեցել, ուր պատկերում եք Ձեր մեծ սերը դեպի վրաց լեզուն ու գրականությունը:

- Մանկությունից սիրել եմ օրագիր պահել: Գրում էի չափածո եւ այդպես արտահայտում մտքերս: Հիմա էլ պատմվածքներ եմ գրում, էսսեներ եւ ժամանակ առ ժամանակ կարդում աշակերտ-

ներիս ու երեխաներիս համար: Ես միշտ բարձրաձայն ասել եմ, որ վրացերենը իմ մայրենի լեզուն է, հիմա ես հայերենն է դարձել իմ մայրենին, իսկ նրա հանդեպ առանձնահատուկ սերն էլ, երեւի, վրաց լեզվի եւ գրականության վաստակն է:

- Ի՞նչ կասեիք Դիլիսկայի մասին: Այստեղ գարունն ուշ է գալիս:

- Սա արդեն իմ հայրենի ու հարազատ գյուղն է: Ասեմ նաեւ, որ ցավոք, գյուղում միայն մեկ վրացի է բնակվում: Նրա հետ լավ հարաբերություններ ունենք, եւ ցանկանում եմ, որ այստեղ շատ վրացիներ ապրեն, որովհետեւ դա կօգնի ավելի հեշտ սովորել պետական լեզուն եւ խոսել վրացերեն: Հաճախ նշելում եմ, երբ մեր երեխաները դպրոցում խոսում են կայացած վրացերենով, իսկ դպրոցից դուրս մոռանում են, քանի որ վրացիների հետ ոչ մի հաղորդակցություն չունեն: Ինձ ուրախացնում է այն փաստը, որ մեր տարածաշրջանում այդքան հաջող են ընթանում պետական ծրագրերը, որոնց շրջանակներում երկրի տարբեր վայրերից ժամանած մանկավարժները մեծ սիրտ եւ հարգանքի են արժանանում տեղացի-

ների կողմից, կիսում մեզ հետ ժամանակակից մեթոդները, համագործակցում ենք ու համատեղ ուժերով հասնում նպատակի: Հենց մեր համատեղ աշխատանքի արդյունքն է, որ մեր գյուղում մշտապես լսվում է վրացական «գամալը»-ն եւ «րոգոր բրձանդեթի»-ը: Դրա լավագույն հավատարմ երիտասարդությունն է, որը տարբեր բուհերում վրաց լեզվով է շարունակում ուսումը եւ պատասխանատվությամբ վերաբերվում վրաց լեզվի ուսուցման գործընթացին:

Մեր գյուղացիները շատ աշխատասեր են, հիմնականում՝ հողի աշխատավորներ: Վերջերս տասներկուերորդ դասարանի իմ աշակերտներից մեկն ասաց. «Հարգելի դասատու, երբ պիտի ավարտվի հողի աշխատանքը, որ հետո սրտանց հետևեն դասերիս»: Նրա խոսքերից հասկացա, թե ինչքան է մտածում այդ երեխան ե՛ւ ուսման, ե՛ւ աշխատանքի մասին:

Անցած տարի ես մեկ սերունդ ճանապարհեցինք դեպի կյանք, շատ գեղեցիկ «Վերջին զանգ» ունեինք, ուր ներկայացվեցին վրացական պոեզիան եւ վրացական «Դասիս» պարը: Ես երջանիկ եմ, որ ունեմ վրացերեն բարձրաձայն խոսք ասելու հնարավորություն իմ գյուղում, դպրոցում սովորեցնելու վրացերեն, վրացերենի հանդեպ մայրենիին համարժեք սեր տածել եւ այն մայրենիի պես սիրել տալ բոլորին: Հենց սրանով էլ ես ճշմարտացի կլինեմ մորս եւ երկրի առջեւ եւ գիտեմ կոմսահատվեմ նաեւ Աստծու կողմից:

Հ.Գ. Ես այս գյուղում աշխատում եմ 2013 թվականի փետրվարից, «Վրաց լեզուն ապագա հաջողության գրավական» ծրագրի շրջանակներում: Երբ առաջին անգամ դպրոց գնացի, տիկին Աննան շատ ջերմ ընդունեց, ծայտաց, սրտանց փաթաթվեց եւ ասաց. «Բարի գալուստ, ուրախ եմ, որ այսօրվանից միասին կուսուցանենք վրաց լեզուն, կօգնես ինձ եւ կկիսես ինձ հետ ուսուցման նոր ժամանակակից մեթոդները»: Անկեղծ ասած, ինձ զարմացրեց այս անկեղծությունը, բայց շատ շուտ համոզվեցի, որ մեծ հաճույք է համագործակցել նման փորձառու մանկավարժի հետ, որը մայրենի լեզվի նման է ուսուցանում վրացերենը: Իսկ այսօր ես եւ տիկին Աննան, մյուս վրացերենի մանկավարժների հետ միասին, սովորեցնում եւ իրականացնում ենք տարբեր միջոցառումներ: Աշխատում ենք, որ պետական լեզուն ոչ միայն սովորեցնենք մեր հայ սաներին, այլ սեր ներարկենք վրացերենի նկատմամբ եւ ծանոթացնենք փառապանծ վրաց մշակույթին, որպեսզի նրանք իրենց զգան մեր երկրի լիարժեք քաղաքացիներ:

Այդ պատճառով փորձեցի վրացի լեզուն ծանոթացնել Ջավախեթիի գյուղերից մեկի մի ուսուցչուհու հետ, որն ամեն օր է հոգ տանում արհեստավարժ առաջընթացի համար:

Շնորհավորում եմ տիկին Աննային այս Նոր՝ 2014 տարվա առիթով, մաղթում նորից եւ դեռ երկար շարունակել իր մանկավարժական գործունեությունը՝ վրաց լեզվի ուսուցումը Ախալքալաքիի շրջանի գեղատեսիլ գյուղերից մեկում Դիլիսկայում:

Զրուցեց ՆԱԹԻԱ ՎԱՐՉԵԼԱՇՎԻԼԻՆ Դիլիսկայի թիվ 1 համրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի

«Սամի սաունքե» հանդես, թիվ 3

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ - 90

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցուն, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի եւ հոգեւոր դասի մասնակցությամբ, մեծ կինոռեժիսորի հիշատակին կատարվեց հոգեհանգստի կարգ:

Այնուհետեւ հուշ-երեկոն շարունակվեց «Հայարտուն» կենտրոնում, որտեղ կազմակերպվել էր Սերգեյ Փարաջանովի լուսանկարների ցուցահանդեսը:

Բացման խոսքում կենտրոնի համակարգող Լեւոն Զիդիյանը խոսեց միջոցառման նշանակության եւ հռչակավոր ռեժիսորի մասին երիտասարդությանը տեղեկացնելու անհրաժեշտության մասին:

Ներկաները դիտեցին Ռոմ Հուլիովեյի «Փարաջանով. Ռեքվիեմ» վավերագրական ֆիլմը, որտեղ ճանաչ-

ՄԵԾԱՐԿԵՑ ԱՇԽԱՐՀԱՐՈՉԱԿ ՌԵԺԻՍՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ



ված կինոռեժիսորը խոսում է ինքն իր եւ իր ստեղծագործական ուղու մասին:

Մեր գործակալությանը տված հարցազրույցում Յուրի Մեչիստովը ասաց. «Նա շատերին մարտահրավեր ուղղեց: Նա հետաքրքիր կյանք ուներ եւ, ըստ իս, այդ կյանքը մինչ

Հունվարի 9-ին աշխարհահռչակ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը կդառնար 90 տարեկան: Թբիլիսիում, Իոսիֆ Փարաջանովի եւ Սիրան Բեժանովայի ընտանիքում ծնված, ստեղծագործական արգասաբեր տարիները Վրաստանում եւ Ուկրաինայում անցկացրած եւ Երեւանում 1990 թվականին հուղարկավորված Սերգեյ Փարաջանովի հորեկանին էր նվիրված հուշ-երեկոն, որը նախաձեռնել էր «Հայարտուն» կենտրոնը՝ ծանաչված լուսանկարիչ Յուրի Մեչիստովի հետ համագործակցությամբ եւ Հայաստանի Մշակույթի նախարարության աջակցությամբ:

օրս էլ չի ավարտվել, քանզի հանճարների կյանքը չի կարող ավարտվել»: Իսկ մեզ հետ զրույցում Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի նախկին գեղարվեստական ղեկավար Միքայել Գրիգորյանը, խոսելով Փարաջանովի մասին, ասաց. «Այո՛, Փարաջանովը

հայ էր, սակայն նա Վրաստանի արժանավոր զավակն էր եւ պետք է հուղարկավորվեր ոչ թե Երեւանում, այլ Թբիլիսիի պանթեոնում»:

«Կովկասիկ ուզել» գործակալությանը տված հարցազրույցում «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը ընդգծեց. «Նա ամեն ին-

չով զարմացնում էր: Ինձ բախտ վիճակվեց Կիււոն ներկա գտնվել նրա ծննդյան օրվան: Այդ ժամանակ ես աշխատում էի Մոսկվայում, «Կոմսոմոլսկայա պրավդայի» խմբագրությունում: Հիշում եմ, նրա բնակարանում ինձ ապչեցրեց այն, թե ինչպես ընդունեցին հյուրերին, բոլոր ուսետները նրա նեղ «խորուշչովկայում» կախված էին լարերից: Տեսնելով այդ ամենը՝ հասկացա, թե ինչու է նա նկարահանել նման ֆիլմեր: Անկասկած, նրա նման տաղանդավոր մարդիկ տարբերվում են ինչպես վարմունքով, այնպես էլ՝ նրանով, թե ինչպես են նրանք խոսում»:

ԷԴԻՏԱ ԲԱՂԱՅԱՆ
«Կավկասիկ ուզել» գործակալության թղթակից, հատուկ «Վրաստանի» համար

- Մարդուն դարձնում է տեսնար:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Հայաստանի կառավարությունը հաստատեց ապրանքների որակի ստուգման ընթացակարգերը: Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանը կառավարության հունվարի 16-ի նիստում նշեց, որ ընթացակարգերը վերաբերում են ինչպես պարենային, այնպես էլ՝ ոչ պարենային ապրանքներին:

Արտադրանքի տեխնիկական կանոնակարգերում համապատասխանության գնահատման ընթացակարգերի սահմանման հիմնական նպատակն է հնարավորություն տալ արտադրողին, մատակարարողին եւ (կամ

համապատասխանության գնահատման մարմին՝ երաշխավորելու հասարակությանը, որ շուկա մուտք գործող արտադրանքը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին՝ մար-



դու կյանքի, առողջության անվտանգության ապահովման, չրջակա միջավայրի, այդ թվում՝ բուսական եւ կենդանական աշխարհի պահպանման տեսանկյունից:

ԳՆԱՀԱՏՎԵԼ ԵՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մաքսային միությանը (ՄՄ) եւ Միասնական տնտեսական տարածքին (ՄՏՏ) Հայաստանի միանալը դրական արդյունք կունենա երկրի տնտեսության համար: Այս եզրակացությունը է բովանդակում «Հայաստանը եւ Մաքսային միությունը. ինտեգրացման տնտեսական արդյունքի գնահատումը» վերտառութային հետազոտությունը, որը կատարել է Զարգացման եվրասիական բանկի (ՁԵԱԲ) Ինտեգրացիոն հետազոտությունների կենտրոնը:

ՄՄ-ին Հայաստանի միանալու արդյունքների քանակական վերլուծությունը ցույց է տվել, որ ՄՄ-ին ինտեգրվելու գործընթացում Հայաստանի ՀՆԱ-ի լրացուցիչ աճը կկազմի տարեկան

մոտավորապես 4 տոկոս: Միայն մեկ տարում ռուսական գազի գնի նվազեցումից 140 մլն դոլարի չափով առևտրական է ֆեկտը համադրելի է 146 մլն դոլարով ՀՆԱ-ի աճի հետ, որը

երկարաժամկետ հեռանկարում երկրին կապահովել եվրամիության հետ ապահովման համաձայնագիրը:

Վերլուծաբաններն ընդգծում են, որ ՄՏՏ-ին անդամակցելուց Հայաստանի հիմնական օգուտներից մեկը միասնական աշխատաշուկա մտնելն է: ՄՏՏ-ում ապրանքների եւ կապիտալի ազատ տեղաշարժան շնորհիվ, երկիրը կստանա տարողունակ եւ պաշտպանված շուկա մուտք գործելու եւ միաժամանակ այն հատվածներում

ներդրումների ներհոսի հնարավորություն:

Վերլուծաբանները արձանագրել են, որ երկիրը պետք է իր շուկայի պաշտպանության մակարդակն էականորեն բարձրացնի մինչև Մաքսային միության մակարդակ: Մաքսատուրքերի բարձրացումը կհանգեցնի բյուջեի պակասուրդի կրճատման, բայց գործի կղմի Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում սրբազան մեխանիզմը, նշված է հետազոտության մեջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՂԵՔՍՈՎ՝ 18-ՐԴԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ 41-ՐԴԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

The Heritage Foundation Ֆոնդը եւ The Wall Street Journal ամսագիրը հրապարակել են «Տնտեսական ազատության ինդեքս-2014» զեկույցը, որտեղ Հայաստանը զբաղեցրել է 41-րդ տեղը 178 երկրների շարքում եւ 18-րդ տեղը՝ 43 եվրոպական երկրների շարքում: Ինդեքսի ձեւակորման 20-ամյա պատմության ընթացքում, Հայաստանը բարելավել է իր տնտեսական ազատության գնահատականը 26,7 միավորով:

Արձանագրելով գնահատականների բարելավումներ 10 «ազատություններից» 8-ում, այդ թվում՝ դրամավարկային ազատությունը, ֆինանսների կառավարման ազատությունը, առևտրի ազատությունը ու ֆինանսական ազատությունը:

Հայաստանի 2014թ. ինդեքսը գնահատվել է 68,9 միավոր: Համաձայն ինդեքսի, վերջին տասնամյակում Հայաստանը առաջընթաց է գրանցել տնտեսության դիվերսիֆիկացման եւ աղքատության նվազման առումով: Հայաստանի տնտեսությունը

գնահատվել է «չափավոր ազատ»: Հայաստանում միջին տարեկան եկամուտը 5838 դոլար է, գնաճը՝ 2,5 տոկոս:

Այնուամենայնիվ, զեկույցի հեղինակները փաստել են, որ Հայաստանը համոզիչորեն է շատ դժվարությունների տնտեսության հետագա ամրապնդման ճանապարհին: «Գույքային իրավունքների պաշտպանության եւ կոռուպցիայից պաշտպանվածության բաղադրիչը «բավական ցածր է համաշխարհային չափանիշներից», եւ իրավական դաշտը «դեռեւս թույլ է»:

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎՈՒՄ Ե ՌՈՌԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանում 2014 թվականին կնքվարկի ոռոգման համակարգերի արդիականացման հերթական ծրագիրը, որի արդյունքում, 1995 հեկտար հողերում մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոսով, 1660

հեկտարով կընդլայնվեն պոտենցիալ ոռոգելի տարածքները: Ծրագրի հիմնական նպատակն է առավելագույնը կրճատել մեխանիկական օգտագործվող ջուրը, իսկ մեխանիկականը բավական թանկ է: Ծրագրի իրականացման նպատակով, Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը 2013թ. Հայաստանին տրամադրել է 30 միլիոն դոլարի վարկ՝ 25 տարի մարման ժամկետով, արտոնյալ պայմաններով: Հայաստանի կառավարության համաֆինանսավորումը կկազմի 7,5 միլիոն դոլարին համարժեք դրամ: Ծրագիրը կավարտվի 2017 թվականին:

Հայաստանում ոռոգելի հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 208 հազար հեկտար:

Հայաստանում արդեն ընտրվել են տարիներ հայտարարվել էր «Տարվա թռչուն 2014-ը»: Ընտրության թեկնածու թռչուններն էին՝ սեւ անգղը, երկնագույն ալկիոնը, հոպոպը, սեւ ագռավը, ամուրիկը, եվրոպական բվիկը, սովորական կիվիկը, սեւ կենեխը, սովորական հողմավար բազեն եւ կարմրակրույց սուզաբարդ: Նախաձեռնության նպատակն է սեւեռել Հայաստանի բնակչության ուշադրությունը թռչունների եւ նրանց բնադրավայրերի պահպանման խնդիրներին:

ՏԱՐՎԱ ԽՈՐՀՐԳԱՆԵՐԸ ՀՈՊՈՊԵՆ Է

Հայաստանում արդեն ընտրվել են տարիներ հայտարարվել էր «Տարվա թռչուն 2014-ը»: Ընտրության թեկնածու թռչուններն էին՝ սեւ անգղը, երկնագույն ալկիոնը, հոպոպը, սեւ ագռավը, ամուրիկը, եվրոպական բվիկը, սովորական կիվիկը, սեւ կենեխը, սովորական հողմավար բազեն եւ կարմրակրույց սուզաբարդ: Նախաձեռնության նպատակն է սեւեռել Հայաստանի բնակչության ուշադրությունը թռչունների եւ նրանց բնադրավայրերի պահպանման խնդիրներին:

«Տարվա թռչուն» խորհրդակցությունը իր մեկնարկը սկսել է 2009 թ.-ից: 2013 թվականին տարվա թռչնատեսակ է ձանաչվել արշալուսիկը:



ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՇԵՏՆԵՐ

«Համակարգիչ դպրոցականների համար» ծրագրով 2015 թվականին հանրակրթական դպրոցի առաջին դասարանցիները կկարողանան օգտվել հայկական արտադրության պլանշետներից:

Այս մասին ասաց Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Նրա խոսքով այս տարի արտադրվելիք հայկական պլանշետը պետք է դառնա կրթական գործիք դպրոցականների համար: «Առաջին դասարանցիների համակարգիչով ապահովվելու ծրագիրը նա-

խատեսված էր 2016 թվականի համար: Համակարգիչներն ապահովված կլինեն երկու տեսակի կրթական ծրագրերով՝ պարտադիր ուսուցման եւ հավելյալ,- ասաց նախարարը:

Հայաստանի կրթության ու գիտության նախարարությունը եւ միջգերատեսչական

հանձնաժողովը մշակել են ուսումնական համակարգիչների արտադրության զարգացման հայեցակարգը, որը ենթադրում էր, որ 2016 թվականի սեպտեմբերից սկսած յուրաքանչյուր առաջին դասարան հաճախող երեխա պետության կողմից կստանա անվճար համակարգիչ:

ՀԻՄՆԱՆՆԴԻՐ

Վրաստանի, ԱՊՀ եւ Արեւելյան Եվրոպայի մեր բազմաթիվ հայրենակիցներ փորձում են Հայաստան այցելել իրենց մեքենաներով, դրանում ոչ մի վատ բան չկա: Ընդհակառակը, դա պետք է խրախուսել: Նկատի չունենք «Արի տուն» կամ նմանատիպ լավ ծրագրերը: Նկատի ունենք պարզապես անհիմն խոչընդոտների վերացումը: Աբսուրդ է, իհարկե, սակայն իր ավտոմեքենայով Հայաստան այցելող մեր հայրենակիցները կա՛մ շատ արագ պետք է լքեն Հայաստանը, կա՛մ ենթարկվեն հսկայական տույժի մեքենան ժամկետից ավելի հայրենիքում պահելու համար: ԱՊՀ երկրներում արդեն առասպելներ են պատմում մեքենայով Հայաստան այցելելու հետեւանքների մասին, բայց չէ՝ որ շատերը տեղյակ չեն գործող խիստ օրենքներից ու Հայաստանում գոնե հարգալից ընդունելություն են սպասում:

Այս խնդիրը հիմա սրվել է այն պատ-

«ԱՐԻ ՏՈՒՆ», ՍԱԿԱՅՆ ԱՌԱՆՁ ԱՎՏՈՄԵԲԵՆԱՅԻՐ

Սեփական ավտոմեքենայով Հայաստան այցելողներին մաքսային սահմանի մոտ բազում անակնկալներ են սպասում: Եթե ավտոմեքենան հաշվառված է այլ երկրում, ապա քաղաքացուն զգուշացնում են՝ ավտոմեքենան Հայաստանից հանել 15 օրվա ընթացքում:

Ճառով, որ Սոչիի օլիմպիադայի նախապատրաստման շրջանում այդ տարածաշրջանում կիրառվում են անհատական միջոցառումներ: Մեր հայրենակիցներից շատերը դեմ չեն մի քանի ամսով պատսպարվել Հայաստանում, սակայն, ավտոմեքենան այս պարագայում անհաղթահարելի խոչընդոտ է հանդիսանում:

Խնդիրը սկսվում է նրանից, որ Հայաստան այցելելիս մաքսային մարմինները ավտոմեքենայի վրա կիրառում են «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը: Իսկ ըստ Մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածի, ժամանակավոր ներմուծված ապրանք պետք է 15 օրից վերադարձան-

վի: Ընդ որում՝ տարվա ընթացքում կարելի է ընդամենը 2 անգամ այդպիսի տասնհինգօրյա այցելություն կատարել: Օրենքը հաշվի չի առնում, որ մարդը մեքենան վերափառում է միայնակ չի հետապնդում, այլ ընդամենը ժամանակավոր հայրենիք է այցելել:

Սրանով ավտոմեքենայի տիրոջ դժբախտությունները չեն վերջանում: Հարկավոր է նաեւ մի շարք մուծումներ կատարել՝ մաքսավճար, բնապահպանական վճար, ճանապարհային վճար: Ընդհանուր առմամբ, սրանք կարող են կազմել մոտ 25 հազ. դրամ: Դրանց գումարվում է ժամանակավոր ԱՊՊԱ-ն, որ չգիտես ինչու, գանձվում

է 1 ամսվա կտրվածքով, թեւ մեքենան 15 օրից պետք է դուրս հանել Հայաստանից: Մեր բազում հայրենակիցներ սեփական ավտոմեքենայով Հայաստան այցելելուց հետո, բավական երկար ժամանակով մտքներից հանում են կրկին այցելելու գաղափարը: Ու ոչ մի «Արի տուն» ծրագիր նրանց չի մտափոխի:

Ավտոմեքենայով երկիր մուտք գործելու սահմանափակումներ գործում են նաեւ այլ երկրներում: Սակայն, Հայաստանի պայմանները, թերեւս, ամենախիստ են: Օրինակ՝ Վրաստանում թույլատրում են 3 ամիս, Ռուսաստանում՝ 1 տարի: Կարծում ենք՝ Սփյուռքի նախարարությունը պետք է լրջորեն զբաղվի արհեստական խոչընդոտների վերացման հարցերով, այլապես բոլոր տեսակի «Արի տուն» ծրագրերը անխուսափելիորեն կարծեգրվեն:

ՍԱՄՎԵԼ ԱՎԱԳՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆՎԱՐ

20.01.2014. Սուրբ Թեոդոս թագավորի եւ Եփեսոսի մանկանց հիշատակության օր



21.01.2014. Սուրբ Վկաներ Գորդիոսի, Պողոսի-տոսի եւ Գրիգորիոսի հիշատակության օր
Սուրբ Կիրակոսի, նրա մոր Դուլիտայի հիշատակության օր

23.01.2014. Սուրբ Վահան Գողթնեցու հիշատակության օր

Սուրբ Եվգինե կույսի, նրա հոր Փիլիպպոսի եւ մոր Կողմիայի, երկու եղբայրների՝ Սերգեյի եւ Ասի-տոնի, երկու ներքինիների հիշատակության օր

25.01.2014. Սուրբ Աթանաս, Սուրբ Կյուրեղ հայրապետների հիշատակության օր

ՍԱՔՍԱԿԵՏ

ԱՆՈՒՄԱԿԵՏԸ ԿԳՈՐԾԻ ՀՈՒՐՁՈՐՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՎ

Վրաստանի հյուսիսում գտնվող «Դարյալի» սահմանային անցումակետը սկսել է գործել շուրջօրյա աշխատակարգով: Վերոնշյալ որոշումը Վրաստանի ՆԳ նախարարությունն ընդունել է այն պատճառով, որ մեր երկրի ձմեռային հանգստավայրեր զբոսաշրջիկների թիվը զգալիորեն ավելացել է: Ավելացել է նաեւ երկրից արտահանվող գյուղմթերքների ծավալն ու տարանցիկ մեքենաների քանակությունը:

Հիշեցնենք, որ Ռուսաստան ուղեւորվող բեռնատար մեքենաների վարորդների համար Ռուսաստանի Դաշնությունը դյուրացրել է այցեգրերի հանձնման կարգը:

Վրաստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է միայն մարդատար՝ մինչեւ 30 մատատեղ ունեցող ավտոմեքենաների համար՝ անվաշղթաների կիրառման դեպքում:

ԵՂԱՆԱԿ



ՍԱՌԵՅՆԱԿ ՆԻԱԳԱՐԱՆ

Անոմալ ցրտերի պատճառով սառել է աշխարհի ամենամեծ, 51 մետր բարձրություն ունեցող Նիագարա ջրվեժը:

Միացյալ Նահանգների եւ Կանադայի միջեւ գտնվող Նիագարայի ջրվեժը ցրտերի պատճառով շատ տեղերում սառցակալել է, եւ ջրի շիթերն այդպես էլ մինչեւ գետը չեն հասել: Պատմության մեջ Նիագարան սառել է երկու անգամ՝ 1848 եւ 1912 թվականներին: Սա արդեն 3-րդ դեպքն է: Այս տարի Ամերիկա ներխուժած ցուրտը, որտեղ որոշ մասնագետները սառնամանիքները հասնում են 50°, արդեն 20 մարդու կյանք է խլել, իսկ ԱՄՆ կառավարությանն ավելի քան 5 մլրդ դոլարի վնաս հասցրել: Նման ցուրտ Ամերիկայում վերջին 20 տարում չէր գրանցվել:

ՎՐԱՍՏԱՆ

ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ՓՈԽԿԵԼ ԵՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՌԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

2014 թվականի հունվարի 18-ից ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունը քաղաքացիներին նորույթ է ներկայացնում. փոխվում են տեղեկատվական սպասարկման ժամկետներն ու սակագները: Մասնավորապես, շահագրգռված անձինք դատվածության մասին տեղեկանքը 25 լարիով կարող են ստանալ մեկ աշխատանքային օրում: Նույն տեղեկանքը աշխատանքային երեք օրում ստանալու համար հարկ է վճարել 15 լարի, 5 օրում տեղեկանքը տրվում է անվճար:

Փոփոխություններն առնչվեցին նաեւ պետական սահմանի հատման, կորուստի հետ կապված անձի փնտրտուքի հայտարարության, քրեական պատասխանատվությամբ սահմանման եւ ՆԳ նախարարության տվյալների բազայից տեղեկանք ստանալու հետ: Այսպես, վերոնշյալ տեղեկանքը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստանալու համար հարկ է վճարել 25 լարի, երեք աշխատանքային օրում՝ 15 լարի, իսկ 5 աշխատանքային օրում՝ 10 լարի:

ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆԵՑԻՆ ՀԱՐԱԾ ՄԵՔԵՆԱՆ

Վրաստանում գործող «Ռոմ-պետրոլ» ընկերությունը 2013 թվականի թողարկության «Տոյոտա կորոլա» ավտոմեքենան հանձնեց ընկերության կողմից հայտարարված խաղարկության շահողին՝ Ծալկայի շրջանի համըր գյուղի համրային դպրոցի տնօրեն Օթար Վանաձեին: Վանաձեն վերոնշյալ շահույթին արժանացել է բենզինի՝ կոնկրետ այդ ընկերությանը ցուցաբերած հավատարմության համար՝ մա 100 կմ հեռավորության վրա գտնվող գյուղից պարբերաբար բենզավաճակայան էր գալիս դիզելային վառելանյութ գնելու:

Նշենք, որ «Ռոմպետրոլի» խրախուսական խաղարկությունը շարունակվում էր 44 օր, որի ընթացքում սպառողները գնված յուրաքանչյուր 20 լիտր վառելանյութի դիմաց ստանում էին խաղարկության մեկ տոմս:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԵՎ ՀՆՁՆԵՅ ԹԵՆԳԻՉ ԳԱՄԻՂԱՉԵԻ ԿԻԹԱՌԸ...

Վրաստանի հայ երաժիշտների միության նախաձեռնությամբ եւ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ կայացավ կիթառի երեկո: Այն նվիրված էր ճանաչված երաժիշտ-մանկավարժ, կիթառահար Թենգիզ Գամիդաձեի բեմական գործունեության 50-ամյակին:



Միջոցառմանը ներկա էին մայրաքաղաքի կիթառի մեղեդու սիրահարներ, արհեստավարժ կիթառահարներ, երաժիշտներ, ավագ եւ երիտասարդ սերնդի կիթառահարներ:

Երեկոյն վարում էր Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ, Վրաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նախկին երաժիշտ Արտեմ Կիրակոզովը (Գրիգորենց): Վերջինս իր բացման խոսքում հիշատակեց թիվիսահայ երաժիշտներ Նիկիտա Մկրտչյանի, Օթա Առաքելյանի անունները, ովքեր իրենց ավանդն են ներդրել թիվիսիում հայ երաժշտական արվեստի զարգացման գործում: Ու տարածվեց դաշիճուն Սայաթ-Նովայի «Դուն է գլխեն» երգի ձայնագրությունը կիթառահար Օթա Առաքելյանի անկրկնելի կատարմամբ՝ զարմանք եւ հիացմունք պատճառելով ունկնդիրներին:

Միմյանց հաջորդեցին կիթառահարներ Ռոման Բրեգվաձեի, Նոդար Կենճաձեի, Ռեւազ Գոջիաշվիլու, Ալեքսանդր Սարքիսովի ելույթները: Խոստումնալից էին Թենգիզ Գամիդաձեի աշակերտներ Իրակլի Դվինջիլիայի, Ալեքս Դասաբովի եւ մյուսների կատարումները: Ռուսական ռոմանսների կատարմամբ կիթառի երեկոյին առանձին փայլ տվեց ճանաչված երգչուհի Ալետա Տատոեան, իսկ կիթառահար Մերաբ Անդրոնիկաշվիլու ելույթն ուղեկցվեց ջերմ ծափահարություններով: Երեկոյն դարձավ այս գեղեցիկ լարային գործիքի երկրպագուների տարբեր սերունդների կատարումների համադրում:

Թիվիսիի նախկին թիվ 95 հայկական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խոր վշտով հայտնում է վաստակաշատ ուսուցիչ Ռաֆայել Հովելի ՓՈԶԻԿՅԱՆԻ մահը եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքին:



			1		2		3		4						
5		6			7			8			9		10		
		11			12		13			14					
15	16				17			18			19		20		
							21								
22		23	24		25				26	27	28	29			
				30					31						
32									33						
					34			35							
				36				37							
		38	39			40	41				42	43			
44								45			46				
						47		48							
49	50				51					52		53			
				54				55							
56		57	58	59				60			61	62	63		
		64		65			66			67					
68												69			

ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 5.Պտտվող խաղալիք: 9.Սա-

յաթնովյան ... ու տաղ: 11.Երգչուհի ... Ռիվաս: 12.Զուգապար: 13.Ա.Ծերեթելի, Վ.Փալվելա, Ռ.Միշվելաձե: 14.Տետրի ...: 15.Հնագույն զենք: 17.Գյուղացու փոխադրամիջոց: 18.Ոչ տարբեր: 19.Կապիտալից, հողից կամ գույքից ստացվող կանոնավոր եկամուտ: 22.Վրաստանի ...ային թիմ: 25.Կղզի Միջերկրական ծովում: 26.Աշխարհագրական ...: 32.Վրձնով ու ներկերով աշխատող: 33.Գրքի ...: 34.Գաթայի միջուկը: 36.Թաղամաս Թբիլիսիում: 37.Փշոտ կենդանի: 40.Պարսից շահ: 44.Սիրիայի մայրաքաղաքը: 45.Արեւ, արփի, արեգակ: 46.«Արծիվ եւ սուր» գրքի հեղինակ ... Բակշի: 49.Թուրքիայի «սիրտը»: 51.Համեստ, պատվախնդիր: 52.Թբիլիսյան պարզ ...: 56.Տնակ, գյուղական անշուք բնակարան: 59.Դրանք յոթն են: 60.Հայրն ու մայրը: 61.Ֆրանսիական քաղաք: 64.365 հատիկ ունեցող միր: 65.Դրամական միավոր Թիֆլիսի կինոյի լեգվով: 66.Սիրիի երկար գետը: 67.Տապանի տեր: 68.Թելի ...: 69.Գործարանի արտադրամաս: ՈՐԴՈՇԱՅԻՆ. 1.Ջարդ, կոտորած: 2.Գնդա-

կով սպորտաձե: 3.Սպասքի հունք: 4.Աղոթատեղի: 5.Ձմախառն քամի: 6.Վրաց ..., հայոց ...: 7.Պարատեսակ: 8.Ավորներ: 9.Խոտի «պատառաքաղ»: 10.Հայկական թիվածք: 16.Հիմար թռչուն: 20.Հին հայկական ամսանուն: 22.Պետություն Հյուսիսային Եվրոպայում: 23.Տոնական թիվածք: 24.Քանակ եւ ...: 27.Հայ անվանի կոմպոզիտոր ... Բաբաջանյան: 28.Պետություն Աֆրիկայում: 29.Նամակ ուղղված գործասին: 30.Անհետացած պետություն: 31.Թելադրության ...: 34.Հայկական ճաշատեսակ: 35.Ամենը ...: 38.Քաղաք Ռուսաստանում: 39.Անանկապարտեց: 41.Չխխկան պար: 42.Ոչ գեղեցիկ, անդուր: 43.Պայթուցիկ: 47.Կացինը նրա հիմնական գործիքն է: 48.Երկրի ...ը: 50.Թարմ, ոչ հին: 53.Վրաստանի նախագահի պաշտոնական ...ը: 54.Թմրանյութի տեսակ: 55.Նոր տարվա սեղանի ուտեստ: 56.Վարորդի նստատեղը: 57.Թռչող միջատ: 58.Վկան տեսակ: 61.Օրորոցային երգ: 62.Արաստանի խորհրդարանի մոտ: 63.Կոշտ վառելիք:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ N 106-107 ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 7.Յաթնովյան: 9.Ապրիլ: 10.Տեք: 11.Սոնդիաց: 13.Ինճոց: 16.Ավել: 17.Ռուր: 19.Բյուրե: 22.Կուզիկ: 24.Ծրագիր: 25.Կոմի: 27.Լոլիտա: 29.Էնթոնի: 32.Լայգա: 33.Պոթոսի: 35.Փշոտ: 38.Ռուս: 40.Աթաղի: 41.Իմիջ: 44.Նոքա: 47.Արե: 48.Ասեղ: 50.Միստր: 51.Կով: 52.Թո: 53.Նար: 54.Շվի: 55.Ասե: ՈՐԴՈՇԱՅԻՆ. 1.Յաթնովյան: 2.Գարդե: 3.Պատառ: 4.Շաքի: 5.Կրոն: 6.Ելեց: 8.Նեցուկ: 12.Նվագ: 14.Նայա: 15.Ողջի: 18.Ակոտ: 19.Բրոնզ: 20.Ուզոր: 21.Երեկ: 23.Իկոտո: 26.Մալի: 28.Ուռ: 29.Եյր: 30.Թափ: 31.Նվոց: 34.Թուրքիա: 36.Շան: 37.Տիտղոս: 39.Շիթ: 42.Սարդ: 43.Ջեկի: 45.Ոմն: 46.Ասր: 48.Ավա: 49.Եթե:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
“VRASTAN”
Georgia, Tbilisi
Индекс 66445